ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-723-19.02.2015-ՍՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է անչափահաս տարիքում ԽՍՀՄ տարածքում՝ հակաօդային պաշտպանության օբյեկտում, պաշտպանական կառույցի շինարարության վրա, ռազմածովային բազայում, օդանավակայանում կամ այլ ռազմական օբյեկտում՝ գործող պատերազմական գոտու թիկունքի սահմանների ներսում կամ գործող նավատորմի օպերացիոն դաշտում, երկաթուղու կամ ավտոճանապարհի՝ պատերազմական գոտուն կից վայրում աշխատելու ժամանակահատվածը հաշվառել աշխատանքային ստաժում:

Առաջարկությունն ընդունելու դեպքում իրավակիրառական պրակտիկայում կարող են առաջանալ դժվար լուծելի խնդիրներ՝ կապված նշված անձանց նույնականացման, նրանց՝ նախագծով նախատեսված վայրերում աշխատելու փաստերն ու հանգամանքները հաստատող փաստաթղթերի, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության հավաստիությունը պետական որևէ մարմնում ստուգելու հետ:

Ըստ օրենքի նախագծի հիմնավորման՝ առաջարկության նպատակը ԽՍՀՄ տարածքում Հայրենական մեծ պատերազմի տարիներին անչափահաս տարիքում թիկունքում աշխատած տարիները աշխատանքային ստաժում հաշվառելն է:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում անհավասար պայմաններ կստեղծվեն նախագծում նշված կազմակերպություններում կամ վայրերում աշխատած անձանց և այն անձանց միջև, ովքեր այդ նույն ժամանակահատվածում անչափահաս տարիքում աշխատել են թիկունքում, բայց այլ կազմակերպություններում, օրինակ՝ կոլտնտեսություններում: Այդ մոտեցումը համահունչ չէ հանրապետությունում վարվող կենսաթոշակային քաղաքականությանը:

Բացի դրանից, «գործող պատերազմական գոտու թիկունքի ներսում» և «պատերազմական գոտուն կից վայրում» արտահայտությունները հստակեցման կարիք ունեն և չեն լուծում նախագծի հիմնավորման մեջ նշված նպատակադրումը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 2 հավելվածի 49-րդ կետի համաձայն՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին աշխատած ժամանակահատվածը որպես աշխատանքային ստաժ հաշվարկվում է նաև «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում քաջարի աշխատանքի համար» մեդալով պարգևատրված լինելու մասին վկայականով կամ այդ փաստը հաստատող արխիվային փաստաթղթով: Այս դեպքում

աշխատանքային ստաժում հաշվառվում է 1941 թվականի հունիսի 22-ից մինչև 1945 թվականի մայիսի 9-ն ընկած ժամանակահատվածը՝ սկսած 14 տարեկանից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման մեջ եռամսյա ժամկետում կկատարվեն անհրաժեշտ փոփոխությունները:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում **լրացում կատարելու մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է Հայրենական մեծ պատերազմի տարիներին անչափահաս տարիքում թիկունքում համապատասխան գործունեություն իրականացնելու տարիները հաշվարկել որպես ստաժ՝ հնարավորություն ընձեռելով այդ տարիների համար ստանալ աշխատանքային կենսաթոշակ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է Հայրենական մեծ պատերազմի տարիներին անչափահաս տարիքում թիկունքում համապատասխան գործունեություն իրականացնելու տարիները հաշվարկել որպես ստաժ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի չեզոք ազդեցություն,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված «ԽՍՀՄ տարածքում աշխատանքային և այլ գործունեության ծամանակահավածները» բառերից հետո լրացնել «, այդ թվում եթե անձն անչափահաս տարիքում ԽՍՀՄ տարածքում աշխատել է հակաօդային պաշտպանության օբյեկտում, պաշտպանական կառույցի շինարարական վրա, ռազմածովային բազայում, օդանավակայանում կամ այլ ռազմական օբյեկտում՝ գործող պատերազմական գոտու թիկունքի սահմանների ներսում կամ գործող նավատորմի օպերացիոն դաշտում, երկաթուղու կամ ավտոճանապարհի պատերազմական գոտուն կից վայրում» բառերով:

Նկատի ունենալով, որ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող լրացումը արդեն իսկ նախատեսված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 2 հավելվածի 49-րդ կետում, ուստի վերջինիս ընդունման ազդեցությունը պետական և համայնքների բյուջեների ծախսերի և եկամուտների վրա կլինի չեզոք:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-723-19.02.2015-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243 օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ԽՍՀՄ տարածքում աշխատանքային եւ այլ գործունեության ժամանակահատվածները» բառերից հետո լրացնել «, այդ թվում եթե անձն անչափահաս տարիքում ԽՍՀՄ տարածքում աշխատել է հակաօդային պաշտպանության օբյեկտում, պաշտպանական կառույցի շինարարության վրա, ռազմածովային բազայում, օդանավակայանում կամ այլ ռազմական օբյեկտում՝ գործող պատերազմական գոտու թիկունքի սահմանների ներսում կամ գործող նավատորմի օպերացիոն դաշտում, երկաթուղու կամ ավտոճանապարհի պատերազմական գոտուն կից վայրում» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Սույն օրենքի նախագծի ընդունումն անհրաժեշտ է եղել վաղուց՝ դեռեւս այն ժամանակվանից, երբ սոցիալական երաշխիքներ են սահմանվել Հայրենական մեծ պատերազմի վետերանների համար, քանի որ այդ նույն ժամանակ՝ պատերազմի տարիներին, հազարավոր անչափահասների աշխատանքն օգտագործվել է թիկունքում՝ մինչեւ անգամ ամենաբարդ աշխատանքների կազմակերպման գործընթացներում: Պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի նախաշեմին այդ անձանցից ողջ են մնացել ընդամենը մի քանի տասնյակ քաղաքացիներ, ովքեր տարիներ շարունակ փորձել են որեւէ կերպ գնահատականի արժանացնել երիտասարդության տարիներին կատարված ու մեծամասամբ չվարձատրված ազգանվեր գործը:

Ռուսաստանի Դաշնությունում այդ հարցը վաղուց լուծվել է, քանի որ այնտեղ «Վետերանների մասին» դաշնային օրենքի ուժով թիկունքի վետերաններն ունեն տարատեսակ սոցիալական երաշխիքներ, որոնց թվում են հավելումներն ամսական կենսաթոշակին, արտոնությունները բժշկական սպասարկման ոլորտում եւ այլն (նշված օրենքի 2-րդ գլուխը՝ «Վետերանների սոցիալական պաշտպանությունը»):

Հարց է առաջանում, թե ի՞նչն է երկու երկրների թիկունքի վետերանների միջեւ տարբերությունը, եթե նրանք անկախ ազգությունից այդ տարիներին հավասարապես աշխատել են ու ապահովել պատերազմական գոտու թիկունքի ամրությունը: Եթե որեւէ տարբերություն չկա, ապա ինչու՞ է Ռուսաստանի օրենսդիրը հատուկ գնահատանքի արժանացնում այդ անձանց ծառայությունը, իսկ Հայաստանում նրանք որեւէ արտոնություն չունեն ու երբեւէ չեն ունեցել:

Ներկայացված նախագծով առաջարկվում է Հայրենական մեծ պատերազմի տարիներին անչափահաս տարիքում թիկունքում համապատասխան գործունեություն իրականացնելու տարիները հաշվարկել որպես ստաժ՝ հնարավորություն տալով այդ տարիների համար աշխատանքային կենսաթոշակ ստանալ, ինչով որոշակիորեն կվերականգնվի սոցիալական արդարությունը թիկունքի վետերանների հանդեպ: